ՋԵԿՈՒՅՑ

ԹԵՄԱ՝ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՋԵԿՈՒՑՈՂ՝ Վ. ԲԱԴԱԼՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԱԿՆ –ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՆԵՈՒԹՅՈՒՆԸ

   ... ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ԳՈՐԾԻՉ

   ... ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՀԵՏԱՊՆԴՎՈՂ

2. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ և ՈՐԲԱԽՆԱՄ ԳՈՐԾՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ 2023

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Թումանյանի մուտքը հասարակական կյանքի ասպարեզ սկսվել է անցյալ դարի 80-ականների վերջերին: Դա մի ժամանակաշրջան էր, երբ սկիզբ էր առել հայ ժողովրդի ազատագրական շարժման վերելքը և առավել կազմակերպված բնույթ էին կրում ժողովրդի ազգային ինքնագիտակցության դրսևորումները: 80-ական թվականների կեսից Արևմտյան Հայաստանում հանդես են գալիս առաջին հայդուկները, որոնք իրենց գործունեությունը նվիրում են արևմտահայ ժողովրդի ազատագրության գործին: Առաջանում են քաղաքական գաղտնի խմբակներ և ընկերություններ /1887-ին ստեղծվում է Հնչակյան կուսակցությունը, 1889-ին «Երիտասարդ Հայաստան» խմբակը/: Ազատագրական շարժման գաղափարական դրսևորումները կենտրոնանալով հատկապես հայաշատ Թիֆլիսում, ընդգրկում են տեղի առաջադիմական երիտասարդությունը, որը տոգորված ազգային-հայրենասիրական գաղափարներով, սպասում էր սատարելու արևմտահայ եղբայրակիցների փրկության գործին: Թումանյանի առաջին ոտանավորներում աչքի է զարնում պատանի հեղինակի ազգային-հայրենասիրական ոգին ինչպես նաև հայդուկային որոշ տրամադրություններ, որոնց շուտով բանաստեղծը աշխատում է տալ գործնական բնույթ: Ընկերոջ՝ Անուշավան Աբովյանի վկայությամբ, դեռևս 1886-87թթ. բանաստեղծը հաճախում էր գաղտնի ժողովների: Կնոջ՝ Օլգա Թումանյանի հավաստմամբ, ամուսինը կապված էր հայ ազատագրական շարժման առաջին գործիչներից մեկի՝ Ալ. Գոլոշյանի հետ: 1888թ. նա ատրճանակ էր գնել վերջինիս հետ Արևմտյան Հայաստան մեկնելու համար, բայց հիվանդանալով՝ ետ էր մնացել: Սրանով չի վերջանում նոր հասարակական կյանք մտնող երիտասարդի կապը ազատագրական շարժումների հետ: 1890թ. ամռանը Թումանյանը բանակցություններ է վարել առաջին ժողովածուն Մոսկվայում տպագրելու համար: Այդ մասին ճշգրիտ տեղեկություններ կան Մ. Բարխուդարյանի տպարանի աշխատակից Է. Ավետիսյանի՝ Թումանյանին ուղղած նամակներում ժողովածուն տպագրության ներկայացնելու հանգամանքների մասին, միաժամանակ վկայում, որ բանաստեղծն այդ միջոցին գաղտնի խմբակի անդամ է եղել:

Առաջին նամակը Թումանյանը գրել է 1890թ. հունիսին, և բանաստեղծությունների տետրի հետ ուղարկել Է. Ավետիսյանին: Վերջինիս պատասխանած նամակում, գործնական բանակցություններից բացի, տեղյակ լինելով, որ Թումանյանը **«Երիտասարդ Հայաստան»** խմբակի անդամ է, հարցնում է. «Արդյոք ինչպե՞ս է շարունակվում ձեր ընկերության գործը, կամ թե գոյություն ունի՞, թե ոչ, խնդրեմ գրես»: Այս տպավորությունը Ավետիսյանը ստացել էր ոչ միայն Թումանայնի հայրենասիրական ստեղծագործություններից, այլև այն բանից, որ հեղինակը հարում էր գաղտնի քաղաքական կազմակերպության և քաջատեղյակ էր հայրենիքում տեղի ունեցող դեպքերի ընթացքին: Նորաստեղծ գաղտնի կազմակերպությանը հարելու մասին գրված են ընկերոջ՝Ան. Աբովյանին հղած նամակներում.-«Մկրտիչն ասաց, որ քեզ գրել է, թե Հովսեփ Արղությանին սպանել են, սուտ է բոլորովին, ես ընկերության մեջ եմ»: Հիշատակված ընկերությունը **Դաշնակցություն կուսակցությունն** է, իսկ Արղությանը «Երիտասարդ Հայաստան» գաղտնի քաղաքական խմբի անդամներից էր: Երբ 1890թ. ամռանը ստեղծվում է Դաշնակցություն կուսակցությունը, որպես քաղաքական խմբակ «Երիտասարդ Հայաստան»-ը մտնում է այդ կուսակցության մեջ: Փաստերն հաստատում են Թումանյանի «Երիտասարդ Հայաստան» խմբակի անդամ

լինելը, և հայտնի է նաև այդ խմբակի՝դաշնակցությանը միանալը: Թիֆլիսի հայ հասարակական մտքի վրա իշխողը «մշակական» երիտասարդությունն էր, որի մեջ մտնում էին մեծ մասամբ ժողովրդի ազատության գաղափարներով համակված մտավորականության տարբեր բնագավառների ներկայացուցիչներ:
Այդ կազմակերպության ազատագրական կոչերին հետևում էին նրանք, ում համար թանկ էր արևմտահայ ժողովրդի ազատագրումը, հայկական հարցի լուծումը:
Թումանյանի հասարակական գործունեության մեջ աչքի ընկնողն ամենից առաջ սկզբունքայնությունն է, ինքնուրույնությունը, անկախ նրանից՝ գործը որևէ կուսակցությա՞ն մեջ է, թե՞ այս կամ այն հոսանքին պատկանող պարբերականի: Այս իմաստով շատ հետաքրքրական են Թումանյանի հետևյալ խոսքերը. **«...ուրիշին հարգելուց առաջ ես ինձ եմ հարգում-իմ կարծիքս և իմ հասկացողությունս, ինչ չափով էլ որ կան: Ես իմ «ես»ը ուրիշի ազդեցության չեմ զոհելու երբեք, բայց կհարգեմ ու կպաշտեմ մինչև անգամ, եթե կար մի հանրօգուտ միտք...»: Ապա .«ոչ մեկի զինվորը չեմ /Աստված փրկի, ազատի/»:**

Թումանյանը, լցված գործելու անսպառ եռանդով, միշտ ուղիներ է որոնել ծառայելու իր ժողովրդի ազատագրության գործին: Դրանով է բացատրվում 1895-ի նրա մասնակցությունը **Արևմտյան Հայաստանից Կովկասում հանգրվանած հայ գաղթականությանն օգնող կոմիտեների** աշխատանքին Թիֆլիսում, Ախալքալաքում, Ալեքսանդրապոլում, Երևանում, Էջմիածնում և այլուր: Քաղաքական հոսանքներին պատկանող երիտասարդության հետ Թումանյանը շփվում էր հասարակական ընկերությունների ժողովներում, մասնավորապես հրատարակչական ընկերության գրասենյակում, «Մուրճ»-ի և «Տարազ»-ի խմբագրատներում, նաև «որոշ կուսակցական գունավորում» ունեցող երեկույթներին, որոնց նա առավել հաճախ էր մասնակցում 90-ական թ. սկզբներին:

Թումանյանի այդ տարիների համագործակցությունից և ժամանակակիցների հուշերից երևում է, որ 1893-96թթ. բանաստեղծը միառժամանակ համակրել և հարել է **Հնչակյան կուսակցությանը**: Ըստ ժամանակակիցների՝ Հնչակյան կուսակցությանն է հարել Ղ. Աղայանի ազդեցությամբ: 1895թ. հունվարի 17-ի նամակում, ուղղված Ա. Ղլտճյանին, Թումանյանը հայտնում է, որ ընտրվել է **«Հանգանակող և գործադրող կոմիտետ»**, որի հաստատությունը ուշանում է: 1895թ. նոյեմբերին Թումանյանը կատարում է մի երկար ուղևորություն Բորժոմ – Ախալցխա – Ախալքալաք – Ալեքսանդրապոլ -Կարս-Ալեքսանդրապոլ-Ղարաքիլիսա-Դիլիջան-Երևան-Էջմիածին ուղեգծով: Նրա խնդիրն է եղել հիշյալ վայրերում կազմակերպելու «Հանգանակող և գործադրող կոմիտեի» մասնաճյուղեր կամ «տեղական կոմիտեներ»: Թումանյանի հասարակական գործուն կյանքը դեռ 1890-ականներից չէր վրիպել Թիֆլիսի պահնորդական բաժնի գործակալների ուշադրությունից: Առաջին փաստաթուղթը, որտեղ հիշատակվում է Թումանյանի ազգանունը, թվագրված է 1901, հունիսի 7: Այդ գրությամբ խնդրվում է ժանդարմական վարչություն ուղարկել Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերության անդամների և վարչության կազմի ցուցակը, նշելով 1900թ. անվստահելի քաղաքացիների անունները: 1899թ. կառավարչապետ Գոլիցինի հրամանով **Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը** լուծարքի է ենթարկվում, դառնալով միայն **Թիֆլիսի բարեգործական կազմակերպություն,** որոշակի սահմանափակումներով: 1899թ. սեպտեմբերի 19-ին տեղի է ունենում վերակազմված ընկերության ընդհանուր ժողովը և վարչության ընտրություն, երբ ընկերությանը կրկին անդամակցվում է Թումանյանը, բայց այս անգամ ընտրվում է նաև վարչության փոխանդամ: Ընկերության վարչության մեջ եղել

են Թումանյանի մտերիմները՝ Մարիամ Թումանյան, Ֆիլիպ Վարդազարյան, Արիստակես Զարգարյան /վարչության նախագահը Մ. Դոլուխանյանն էր/, որոնց հետ ունեցած բանաստեղծի հաճախակի հանդիպումները, ժողովներին մասնակցելը հայտնի է եղել ժանդարմական վարչությանը: Թումանյանի անունը պահնորդական բաժնում կարող էր լինել նաև մեկ այլ պատճառով, քանի որ բարեգործական ընկերության գործունեությունը գաղտնի չէր:

Նույն ժամանակ՝ 1899-1900թթ. ուսումնական տարում, աշակերտական **«Ծիածան»** գաղտնի ընկերության «մայր խմբի» հետ Թումանյանն իր բնակարանում պարապում էր հայ գրականություն:

Ընկերությունը ստեղծվել էր այն ժամանակ, երբ գոլիցինյան հայտնի հրամանով դպրոցական ծրագրերից հանվել էին հայոց լեզուն, հայ գրականությունը, և հայ առաջադեմ շատ գործիչներ գաղտնի պարապմունքներով պատանեկությանը մերձեցնում էին մայրենի լեզվին և հայ մշակույթին, նրանց մեջ սերմանում ազգային արժանապատվության զգացում, նպաստում նրանց ազգային ինքնագիտակցության զարգացմանը: Ամենայն հավանականությամբ այս գաղտնի դասերը ինչ-որ ձևով հայտնի են դարձել ոստիկանությանը, գումարվել Թումանյանի բարեգործական ընկերության հետ ունեցած առնչության փաստին և նրա անունը գրանցվել է 1900թ. Թիֆլիսի քաղաքական կասկածյալների ցուցակում: 1900թ. Թումանյանն անդամագրվում է նաև Երվանդ Լալայանի հիմնադրած **Ազգագրական հրատարակչական ընկերությանը**: «Ազգագրական հանդեսի» համար ընտրված խմբագրական հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել Լալայանի բնակարանում և վերջում վերածվել գրական երեկույթների: Երվանդ Լալայանի բնակարանում պարբերաբար հավաքվելու պատճառով 1902թ. փետրվարյան մի գիշեր խուզարկվել են որոշ անդամների բնակարանները, բռնագրավվել են գրքեր, ձեռագրեր, նրանց էլ բանտարկել են: Նույն թվականի փետրվարի սկզբներին ոստիկանները հետապնդել են բանաստեղծին, հսկել տունը և համոզվել, որ փետրվարի 7-ից նա տանից դուրս չի գալիս: Փետրվարի 15-ի լույս 16-ի գիշերը Թումանյանի բնակարանում ևս խուզարկություն է կատարվել և իբրև իրեղեն ապացույց վերցվել է մի գիրք: Թումանյանը չի ձերբակալվել հիվանդության պատճառով: Օլգա Թումանյանի վկայությամբ, 1888թ. ամուսնանալիս, երիտասարդ բանաստեղծը ունեցել է երկու գիրք. «Վերք Հայաստանի»-ն և «Հյուսիսափայլ»-ի մի համար: Ինչպես երևում է «խուզարկության արձանագրությունից», 10-12 տարվա ընթացքում Թումանյանն իր սուղ միջոցներով կարողացել է ստեղծել այն օրերի համեմատ մի պատկառելի գրադարան, բաղկացած ավելի քան 2000 գրքից, մեծ մասամբ հայերեն: Խուզարկուի այն հարցին, թե կա՞ն արդյոք անթույլատրելի գրքեր, Թումանյանը պատասխանել է, թե անտեղյակ է իր գրքերի լեգալ կամ անլեգալ լինելու մասին և ցույց է տվել Զարուբինի “Современные социалисты и революционеры” /1879, Петербург/: Սա մի գիրք է՝ գրված անցյալ դարի ռուս հեղափոխականների դեմ, որ պրոպագանդում է անխնա ոչնչացնել մատերալիզմն իր բոլոր տեսակներով: Թումանյանը դիտավորյալ է խուզարկուի ուշադրությունը հրավիրել հատկապես այդ գրքի վրա, իրենից քաղաքական մեղադրանքը հեռացնելու համար և հասնում է նպատակին. նույն թվականի ապրիլի 12-ին, համաձայն ստացած ծանուցագրի նա ներկայանում է IV քաղաքամասի պրիստավին և ետ ստանում, որպես ապացույց տարված գիրքը: Թումանյանը կասկածի տակ է եղել, որպես ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի անդամ, պատճառը Լալայանների բնակարանների երեկույթներին սոցիալ-դեմոկրատ Գ. Ղարաբյանի /Արկոմեդ/ մասնակցությունն էր, մի ազգանուն, որ լավ ծանոթ էր պահնորդական բաժնին: Չնայած խուզարկությունը ոչ մի արդյունք չի տվել,

այնուամենայնիվ, այս անգամ ևս բանաստեղծի անունը մնացել է կասկածելիների ցուցակում: Երկու անգամ կասկածելիների ցուցակում հայտնվելը չէր կարող ինչ-որ չափով չարգելակել նաև բանաստեղծի գրական գործունեությանը: 1903-ի աշնանը մահափորձ է կատարվում փոխարքա Գոլիցինի դեմ, որը թեպետ անհաջող է անցնում, բայց, հասկանալի է, ուժեղանում են ոստիկանական հետապնդումները: 1904 թ. այդ խառն օրերին Թումանյանը չէր կարող դուրս մնալ պահնորդական բաժնի գաղտնի գրություններից: 1903-ի դեկտեմբերից Թումանյանն իբր եղել է կուսակցական ակտիվ գործիչ և նույնիսկ տնօրեն գաղտնի տպարանի: Իրականությունն այն է, որ 1903-1904թթ. արդեն հռչակված գրող լինելով, նա ընկերներ ու բարեկամներ ուներ գրեթե բոլոր կուսակցություններում: «Թումանյանը ամենքինն էր,-գրում է Խանոյանը,- նրան բոլորն էլ սիրում էին: Ինքն էլ խտրություն չէր դնում սրա ու նրա մեջ. նրա համար բոլորն էլ «մեր տղաներն» էին»: Չի բացառվում, որ նա կարող էր կասկածանքի ենթարկվել հենց իր այդ կարգի կապերի համար:

1905-ի փետրվարին, երբ սկսվեցին հայ-թուրքական ընդհարումները, Թումանյանն իր ամբողջ էությամբ նվիրվեց հարազատ ժողովրդի ինքնապաշտպանության և երկու հարևան ժողովուրդների հաշտեցման գործին: Բաքվի կոտորածից /1905թ.փետրվարի 6-9/ անմիջապես հետո հայ և թուրք մտավորականների որոշմամբ Թիֆլիսում կազմակերպվում է ցույց, որի նախապատրաստման առաջին շարքերում էր Թումանյանը:

Ցույցերն արվում էին ոչ միայն հանուն անդրկովկասյան ժողովուրդների հաշտության. դա եղել է նաև որոշակի վերաբերմունքի դրսևորում ցարական կառավարության, կոտորածների 3ազմակերպիչների դեմ:1905թ. նոյեմբերի 22-ից ազգամիջյան սուր ընդհարումներ են սկսվում Թիֆլիսում, որից հետո Թումանյանն ընտանիքով տեղափոխվում է հայրենի Դսեղ և ամբողջովին նվիրվում Լոռու ինքնապաշտպանությանը: Նոյեմբերի վերջերին տեղի է ունենում Բորչալուի թուրքերի հարձակումը Թիֆլիսի վրա, միաժամանակ ուժեղանում են բանվորական գործադուլները: Լոռում սկսվում են ագրարային շարժումներ, Հաղպատի գյուղացիները ապստամբում են տեղի կալվածատերերի դեմ: Ոստիկանությունը միմյանցից չէր տարբերում հեղափոխության տարբեր արտահայտությունները: Նրա համար միևնույն էին քաղաքի գործադուլավորը և իր կյանքը փրկելու համար զենք վերցնող հայ գյուղացին կամ սպիտակ դրոշակակիր բանաստեղծը: Ժողովրդի ինքնապաշտպանությունը համարվում էր տեռոր թուրքերի դեմ: Եվ քանի որ Թումանյանն արդեն վաղուց «կասկածելի քաղաքացի» էր, պահնորդական բաժնում նրա անունը մտնում է «տեռորիստ հեղափոխականների» ցուցակի մեջ: 1905թ.գրություններից մեկում հանդիպում ենք այսպիսի մի փաստաթղթի. “Краткий список лиц, вошедших в сферу наблюдения в г. Тифлисе с 1-го февраля по 2-ое марта 1905 года”: Ցուցակի մեջ մտնում են հայ, վրացի, ռուս, հրեա հեղափոխականներ, տարբեր կուսակցության պատկանող: Յուրաքանչյուր անվան դիմաց գրված է կուսակցության պատկանելիությունը և ոստիկանության հսկողության մեջ նրանց տրված կեղծանունը. Թումանյանը հետապնդվում էր Жокей կեղծանունով: Հայտնի է, որ բանաստեղծը ինքնապաշտպանության գործին մասնակից էր Բաքվի կոտորածից անմիջապես հետո, տակավին գավառներում ընդհարումներ չսկսած: Նա հսկողության տակ էր 1905թ.փետրվարի 1-ից, դեռ Բաքվի դեպքերից առաջ:Այստեղից և պահնորդական բաժնի վերոհիշյալ փաստաթղթերից հետևում է, որ բանաստեղծի 1908թ. բանտարկության պատճառը չպետք է փնտրել միայն 1905-06թթ. նրա գործունեության մեջ, դա միայն պատրվակ էր: 1905թ. սեպտեմբերից գաղտնի

գրությունում հաճախ է կրկնվում «Շմակովս» կեղծանունը. սա այն գործակալն է, որ հետևել է Թումանյանին հատկապես Լոռու, Բորչալուի շրջանում ու վայրիվերո, իրարամերժ տեղեկություններ ուղարկել բանաստեղծի մասին Թիֆլիսի ժանդարմական վարչություն: Մի տեղ Թումանյանն իբր միջնորդ է դաշնակցության ու գյուղական կոմիտեների, մի այլ տեղ՝ դատի է տրված դաշնակցությունից ինչ-որ գումար վատնելու համար, կամ Իսահակյանի հետ մասնակից է տեռորիստական խմբակի, Քոլագերան կայարանում նրա հրամանով սպանվել են երեք թուրք և այլն: Նման մի անհեթեթ մեղադրանք հիշատակվում է Թումանյանի զինվորական նահանգապետ Զոլոտարյովին ուղղած պաշտոնական նամակում, որ իբր թե «բանաստեղծը սպանել է խեղճ անտառապահին՝ կողոպտելու նպատակով»: Նամակն անթվակիր է, բայց բոլոր տվյալներից երևում է, որ գրված է 1906-ի մայիսին, ճիշտ այն օրերին, երբ «Շմակովը» հետևում էր Թումանյանին Լոռու շրջանում: 1906թ. մայիսի 18-ի գրության մեջ ներկայացվում է մի այլ «մեղադրանք». «Լոռու շրջանում նա, կարծես գեներալ-գուբերնատոր է, նրան է ենթարկվում ամբողջ տեղական ղեկավարությունը և ոստիկանությունը: Նա շրջում է գյուղերում, դատ ու դատաստան տեսնում, տուգանում է գյուղերը...մինչև 500ռ....»: Ճշմարտությունն այն է, որ Թումանյանն անխնա էր գողերի, ավազակների, խառը դրությունից օգտվող ու ամեն տեսակ օրենքներ ոտնահարող կալվածատերերի նկատմամբ: Բայց մատնիչը խորամանկ է, որպեսզի կարողանա պատճառաբանել Թումանյանի ազատ գործունեությունը, նրան համախոհ է հռչակում գավառի պաշտոնյաներին, հատկապես գավառապետին ու նրա օգնականին, պնդելով, որ վերջինները կաշառված են, Թումանյանի միջոցով դաշնակցությունից ստացել են 10.000 ռուբլի**:**
1906-ի մայիսի վերջերին Թումանայնն արդեն տեղյակ էր, որ իր գործունեությունից դժգոհ են Թիֆլիսի պաշտոնյաները և կարգադրություն է արված իր ձերբակալության մասին, բայց այդ լուրերին նշանակություն չտալով, բանաստեղծը շարունակում էր գործել Լոռիում, անձամբ շրջելով, աջ ու ձախ գրություններ ուղարկելով՝ պայքարում էր նույն սկզբունքայնությամբ**:**

1908թ. դեկտեմբերին, Թիֆլիսում և հայաշատ այլ վայրերում սկսում են ձերբակալությունների: Զոհերը մեծ մասամբ հայ մտավորականներն էին, կուսակցական թե անկուսակցական, մոտ 160 հոգի՝գրողներ, ուսանողներ, հասարակական գործիչներ, բժիշկներ, իրավաբաններ և այլն: Բոլորի մեղադրանքը մտնում էր նույն «Դաշնակցության գործ»-ի մեջ: Թումանյանը որդու՝ Մուշեղի հետ բանտարկվում է 1908թ.դեկտեմբեր 23-ի լույս 24-ի գիշերը: Բանտարկյալ Թումանյանի առաջին հարցաքննությունը տեղի է ունեցել հունվարի 3-ին: Թվարկելով իր անմեղությունն ապացուցող փաստեր, որոնք բոլորը կարելի է հաստատել պաշտոնական թղթերով, նամակներով, հեռագրերով ու կենդանի վկաներով, Թումանյանը գրում է, թե գործել է հեղափոխության եռուն շրջանում, և, չնայած դրան, առաջնորդվել է ո՛չ կուսակցական մղումով կամ **«...ո՛չ ինչ-որ մեկին դուր գալու համար, այլ խորը գիտացությամբ ու մաքուր խղճով, դատելով իբրև գրող-բանաստեղծ, որը ծառայում է հանուն լավ և ազնիվ գործի: Այդպես եմ ես հասկացել ժողովրդի շահերը»:** Այս ցուցմունքները, ինչպես և փոխարքա Վորոնցով-Դաշկովին և Թիֆլիսի ժանդարմական վարչության պետին ուղղված խնդրագրերը, արժեքավոր վկայություններ են սկզբունքային մարդու և մեծ քաղաքացու մասին: Սեփական և ազգային բարձր զգացողությամբ էր նա գրիչ վերցնում, առանց որևէ զիջում անելու դիմացինի պաշտոնին, չվախենալով իրեն շրջապատող բանտի պարիսպներից և սպառնացող ցրտաշունչ հյուսիսից: Հավատ սեփական անձի ու

գործի նկատմամբ և լավատեսություն-սրանք էին առաջնորդում բանաստեղծին: Նա վրդովված էր, մանավանդ իրեն տրված «տեռորիստ» մեղադրանքից. «Դուք կարծում եք, որ ես ընդունակ էի ատրճանա՞կ օգտագործելու,-գրում է նա,-բայց ինչպե՞ս կարող էի ես չօգտվել մի զենքից՝ իմ բանաստեղծական տաղանդից և իմ գրչից, որոնք, հավատացեք ինձ, ավելի զորավոր են, քան բոլոր տեսակի ատրճանակները»: Խնդրագրերի մեջ Թումանյանը խնդրողի դերում չէ, այլ բողոքողի: Նա պահանջում է հայտնել իր մեղադրանքն ապացուցող բոլոր փաստերը, որպեսզի կարողանա մեկ-մեկ հերքել, հակառակ դեպքում ինքն էլ կարող է նմանվել այն մարդկանց, որոնք ամիսներով մնում են բանտերում և ապա անմեղ ճանաչվելով՝ ազատվում:

1909թ.մարտ-ապրիլ ամիսներին Թումանայնին վերաբերող գաղտնի գրությունների վրա հայտվում է քննիչ Լիժինի անունը, որը հայտնի էր իր դաժանությամբ: Տեսնելով, որ ժամանակ է պետք համոզիչ մեղադրական գործ ստեղծելու համար, նա համաձայնություն է տալիս երաշխավորությամբ ազատելու մի քանի բանտարկյալների, այդ թվում Թումանյանին, իսկ Մուշեղ Թումանյանը հինգ ու կես ամիս Մետեխի բանտում մնալով՝ անպարտ է ճանաչվում: Բանտից ազատվելուց հետո, /1909թ. հունիսի 13-ից/ Թումանյանի վրա ավելի խիստ հսկողություն է սահմանվում: Պահնորդական բաժինը հաճախակի գրություններ է ստանում, որ “Жокей”-ը Թիֆլիսում է, և «շարունակում է հանցագործությունները». Օրինակ՝ հրաման է տվել տեռորիստներին «սպանելու մատնիչ Շահ-Աբաս Շահվերդովին», այսինչ օրը թաղման և ապա եկեղեցում հավաքույթի է գնացել Աղայանի, Փափազյանի հետ, կամ, իր տանը հյուրընկալելով Իսահակյանին, Ս. Հակոբյանին, բժիշկ Ա. Թադևոսյանին, զրուցել է աշակերտական կազմակերպություն ստեղծելու, բանտարկությունների պատճառով Գևորգյան ճեմարանում և Ներսիսյան դպրոցում ուսուցիչների պակասի մասին և այլն: Սրանք տարբեր գրություններից քաղված «փաստեր» են, որոնք հաղորդված են նրա ամեն քայլի մեջ մտածված հանցանշաններ և ստեղծող հատուկ մարդու միջոցով: Իրականում ինչո՞վ էր զբաղված Թումանյանը:

1909թ., օգոստոսի 16-ին, երբ բանաստեղծը երաշխավորությամբ ազատվել էր կալանքից, նա մեկն էր այն ինը մտավորականներից, որոնց հրավիրել էր Ավ. Արասխանյանը՝ «Գրականագետներին, գիտնականներին, մանկավարժներին օգնող հայոց ընկերություն» ստեղծող հիմնադիր ժողովին մասնակցելու: 1910թ.ապրիլի 24-ին, Թումանյանը նույնպես ստորագրում է այդ ժողովի որոշած կանոնադրության նախագծի տակ: Արդեն ամռանը բանաստեղծը ստանձնում է «Հորիզոն» օրաթերթի խմբագրությունը, և մի նոր թափով մտնում հրապարակախոսական գործունեության մեջ, շարունակում է պատրաստել «Լուսաբեր» դասագրքի տարբեր տարիները, «Հայ գրողներ» քրեստոմատիայի II հատորը և այլն: 1911թ.հունվարին լուրեր են տարածվում պահնորդական բաժին, թե «Հորիզոն»-ի խմբագրատունը դաշնակցության ղեկավարների ժամադրավայրն է, և հունվարի 12-19-ը գաղտնի հսկողություն է սահմանվում խմբագրատան շուրջը: 19-ի ցերեկը խմբագրատուն են ներխուժում պահնորդական բաժնի գործակալները, խուզարկում, կալանավորում են Թումանյանին, թերթի այլ աշխատակիցների ու պատահական այցելուների: Կրկնվել են Թումանյանին տրված նախկին բոլոր մեղադրանքները՝ նոր խմբագրումով և հարստացած քննիչ Լիժինի երևակայության նոր պտուղներով: Բանաստեղծի բնակարանում չորս ժամ տևած խուզարկության եզրակացությունը ցույց է տալիս, որ ոստիկանությունը զենք է փնտրել և գաղտնի նամակագրություն, որովհետև ըստ լրտեսական տվյալներ, իբրև թե Թումանյանն էր տնօրինում զենքի պահպանության

գործը Թիֆլիսումև նրա տանն էր գտնվում դաշնակցության գաղտնի գրագրությունը: Այդպիսիք չհայտնաբերելով պահնորդական բաժին են տարվում մի փոքր դանակ, երկու բանալի, բանաստեղծի ձեռագրերը, ստացած նամակները և այլ նյութեր, որոնք հետո պաշտոնապես վերադարձվում են մեկ օր անց: Այնուամենայնիվ, Թումանյանին մեղադրելու համար հանցանշանների բացակայությունը չի արգելում, որ Պետերբուրգի կառավարական սենատի կարգադրությամբ, երաշխավորությամբ ազատված բանաստեղծը, 1911թ.հոկտեմբերի 31-ին նորից ձերբակալվի և տեղափոխվի Պետերբուրգ: Այսպիսով, առանձին կարևորություն է ներկայացնում Հովհ. Թումանյանի և պահնորդական բաժնի փոխհարաբերության, բանտարկության և դատավարության պատմությունը: Ուշագրավ է այն, որ բանաստեղծը հուսահատության, հոռետեսության, արածի նկատմամբ ափսոսանքի որևէ զգացում չի ունեցել: Նույնիսկ դատավարության օրերին, տակավին պարզ չէր, թե ինչ վախճան է ունենալու գործը, նա ունկնդիր էր, միայն իր ներքին ձայնին. «Լինել մաքուր ու արդար՝ էդ մեծ բան է: Դա տալիս է կայտառություն և ամեն, ամեն ինչ, և առողջություն»: Իհարկե Թումանյանի ցուցմունքների ու դատի ժամանակ իր՝ ՀՀ դաշնակցության անդամ լինելը ժխտող փաստարկներով չի կարելի որոշել նրա՝ այդ կուսակցության մեջ լինել-չլինելու հարցը: Բացի ժանդարմական վարչության նյութերից, առայժմ միակ վկայությունը Արշակ Ջամալյանի հուշն է այն մասին, որ Թումանյանը 1905թ. ապրիլին դաշնակցության կովկասյան առաջին շրջանային ժողովին մասնակցել է որպես Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ: Սակայն նրան հետաքրքրողը միայն ինքնապաշտպանությունն էր, խաղաղությունը, որի սպիտակ դրոշը հակասում էր ցարական բյուրոկրատիայի՝ ժողովուրդների համար հնարած չար խաղին: Բանաստեղծը կարողացավ ապացուցել, որ ինքը միայն խաղաղության համար է գործել և Պետերբուրգի կառավարության սենատի հատուկ ատյանում 1912թ. մարտի 20ին ազատ ճանաչվելով, ապրիլին վերադարձավ տուն:
Չնայած պատերազմական դրությանը և քաղաքական հեղհեղուկ պայմաններին 1916-1917թթ. մշակութային կյանքը Թիֆլիսում նոր վերելք է ապրում: Հայ գրողների ընկերությունն անհրաժեշտ է համարում մշակույթն իր մեջ կենտրոնացնող ընկերության ստեղծումը:

1917-ին հիմնադրվում է **«Հայկազյան ընկերությունը»**, որի ծրագիրը հետևյալն էր. հիմնել հայոց ակադեմիա, դնել հայկական համալսարանի հիմքը, զարգացնել հայագիտությունը, բազմակողմանի ուսումնասիրել և ի մի բերել Հայաստանի աշխարհագրությունը, պատմությունը, գրականությունն ու գեղարվեստը: Նյութապես ապահովել հայ գիտնականներին, գրողներին, գեղարվեստագետներին: Ընկերությունը ստեղծվեց, սակայն երկար չգոյատևեց. Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում, իր հետևանքներով նոր չարիք բերեց հայ ժողովրդին և հիմնովին խորտակեց Թումանյանի ծրագրերի իրականացման հնարավորությունը: Սակայն զուր չանցան նրա ջանքերը. հայկական համալսարանի հիմքը դրված էր: 1920թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում բացվեց առաջին հայկական համալսարանը:

1912թ. ապրիլին Թումանյանի ղեկավարությամբ հիմնվում է **«Հայ գրողների կովկասյան ընկերությունը»,** որի նախագահն է ընտրվում բանաստեղծը: Նա շատ ժամանակ ու եռանդ է տրամադրել «Ընկերությանը», զբաղվել գրական խնդիրներով և գրողների նյութական դրությունը բարելավելու հարցերով: Թումանյանի այս գաղափարը, որ գրականությանն ազգային պաշտպանություն է պետք, դառնում է նրա

գործունեության նշանաբանը, հատկապես Հայ գրողների ընկերության շրջանում:
1914թ. հոկտեմբերին, նախքան ռուս-թուրքական պատերազմի սկսվելը, Թիֆլիսում ստեղծվում է **«Պատերազմից վնասվածներին օգնող կոմիտե»,** որը մշակութային և հոգևոր գործիչների մասնակցությամբ ծավալում է լայն գործունեություն: 1914-1915թթ. Թումանյանի հասարակական ողջ գործունեությունը կապվում է հիշյալ ընկերության կենտրոնական կոմիտեի հետ: Այդ կոմիտեն իր հերթին ենթարկվում էր Հայոց ազգային բյուրոյին, որին Թումանյանն անդամակցում էր նրա գոյության առաջին օրից՝ 1912թ. հոկտեմբերի 30-ի հիմնադիր ժողովից: Այդ օրերին Թումանյանի յուրաքանչյուր հոդված հայ զինվորին և ամբողջ ժողովրդին մղում էր ազատագրական պայքարի, ոգևորում նրանց հաղթանակի հավատով:

1917-1918թթ. բանաստեղծը գլխավորում է մի շարք հասարակական կազմակերպությունների գործունեությունը: Այդ տարիներին հայկական գրեթե բոլոր գավառներում գործում էին **«Հայրենակցական միություններ»**, որոնց խնդիրն էր օգնել պատերազմից տուժածներին և գաղթականներին, հավաքել հանգանակություններ, վարել բանակցություններ տարբեր կազմակերպությունների հետ աջակցելու համար: Աշխատանքը կենտրոնացնելու և ճիշտ կազմակերպելու նպատակով 1918թ. մարտին Թիֆլիսում ստեղծվեց **«Հայրենակցական միությունների միություն»**, որի խորհրդի անդամ ընտրվեց Թումանյանը 1921թ. Սովետական Հայաստանի նախագահ Ալ.Մյասնիկյանի հրավերով բանաստեղծը եկել էր Երևան՝ Հայաստանի օգնության կոմիտե հիմնադրելու համար: Թումանյանին առաջարկում են կոմիտեի նախագահի պաշտոնը: Նա խնդրում է իրեն ազատ թողնել գրականությամբ զբաղվելու համար, սակայն շրջելով Երևանի փողոցներով տեսնելով ծանր ու դաժան պատկերներ՝ բանաստեղծն այսպես է ասում.
«**Երբ մի ժողովուրդ սովամահ է լինում փողոցներում, պետք է թողնել ամեն ինչ, մոռանալ ամեն բան և գնալ նրան փրկելու»:**
Այսպես Թումանյանը դարձավ ՀՕԿ-ի նախագահ: Այս գործը վերջին էր, որ Թումանյանը հասցրեց անել հայրենիքի համար:

Թումանյանը և որբախնամ գործը

Հայ ժողովրդի պատմական ծանր և բացառիկ ճակատագիրը խորը հետք է թողել հայ գրողների, մշակույթի գործիչների և ընդհանրապես մտավորականության կենսագրության վրա: Պատճառներից մեկը թերևս այն է, որ հայրենասիրությունը նրանց համար եղել է կենսակերպ: Հայոց մեծերն իրենց կենսագրության և ստեղծած արժեքների վրա կրում են հայրենի դժվարին պատմության կնիքը՝ սկսած Խորենացուց ու Եղիշեից, մինչև միջնադարյան տաղերգուներ, մինչև Աբովյան, Ռաֆֆի և ուրիշներ: Սակայն այս ոսկեղենիկ շղթայում առանձնահատուկ է Հովհ. Թումանյանի զբաղեցրած տեղը՝ իր անձնական կյանքով և ստեղծագործությամբ: Եթե իրոք ժողովուրդը կարողանում է ծնել այնպիսի բացառիկ զավակներ, ովքեր իրեց հարազատ ժողովրդի ճակատագրական, օրհասական պահերից դեռ շատ առաջ, միայն իրենց հայտնի եղանակներով՝ նյարդերով, արյունով, մաշկով և վերջապես հոգու աչքերով կարողանում են տեսնել արհավիրքը, ապա Թումանյանը մեկն էր այդ հազվագյուտ տեսանողներից, ամենատեսներից: Նա էր, որ դեռ 1913թ. գրում էր.

«...թուրքերը հայկական հարցը վճռելու են բնաջնջումով և թուրքը նրան բաց պիտի թողնի միայն վերջին շնչի հետ... Թուրքիան կդիմի ամենահրեշավոր միջոցներին՝ վերջ դնելու հայ ժողովրդին իր հարցի հետ միասին»:
Ապագա հանճարեղ բանաստեղծը դեռ վաղ պատանեկան տարիներից արդեն համակված էր ազգային վշտով և ազատագրական գաղափարներով: Այլապես ինչը պիտի ստիպեր ընդամենը 15 տարեկան պատանուն գրել այսպիսի տողեր.

Ինչո՞ւ ես տխուր
Թշվառ Հայաստան
Է՞ր է վիզդ ծուռ
Մայր իմ սիրեկան,
Խոցալից սրտով
Մայր իմ Հայաստան:

Թումանյանն ինքն ընտրեց իր ճանապարհը՝ ամբողջ ներաշխարհով, հոգով-սրտով կապվելով հարազատ ժողովրդի ճակատագրին, նրանից այլևս չբաժանվելու պայմանով: Եվ օրինաչափորեն էլ նրա ստեղծագործական ոգու բռնկումներն էլ համընկնում են հայ ժողովրդի ազգային կյանքի համեմատաբար բարենպաստ ժամանակներին: Սակայն, դժբախտաբար մեծ գրողը ստեղծագործական կյանքի ընթացքում երջանիկ շրջափուլեր քիչ է ունեցել: 1914թ., երբ պայթեց առաջին համաշխարհային պատերազմը, հայ ժողովրդին և նրա բանաստեղծ զավակին սպասում էին էլ ավելի զարհուրելի, դժոխային ժամանակներ: Թումանյանն այդ օրերին ընտանիքի, հարազատների և մտերիմների հետ գտնվում էր Ձաղվերում: Նա շուտափույթ վերադառնում է Թիֆլիս և անդամակցում 1914թ. հոկտեմբերին

ստեղծված «Պատերազմից մնասվածներին օգնող կոմիտե»-ին: Եվ այսպես շարունակաբար Թումանյանը պիտի իրականացներ հայրենիքին ծառայելու իր առաքելությունը:

Հոգու ամենանուրբ և ամենասուրբ թելերով կապված լինելով իր ժողովրդին՝ բանաստեղծը հիրավի դարձավ այն հազվագյուտ կանխատեսողներից մեկը, որը դառնորեն գուշակեց հային բաժին պահված պատմության եղերական էջերից մեկը՝ Օսմանյան Թուրքիայի կողմից 1915թ. իրականացված Մեծ Եղեռնը: Երբ Թիֆլիս հասավ կոտորածի լուրը, Թումանյանը հիվանդ, հոգեպես և ֆիզիկապես քայքայված, դստեր՝ Նվարդի հետ մեկնեց Էջմիածին՝ սեփական ձեռքերով հոգալու գաղթականության խնամքի խնդիրները: Թումանյանին ավելի լավ ոչ ոք չի կարող ներկայացնել այդ օրերի մղձավանջը. **«Դա մի պատսպարան էր, ուր հավաքվում, լցվում էին սովամահի ճանկերից խլած երեխաներ… Ահա հազարավոր մայրերի ոսկրացած բազուկների ու ձեռների անտառը…, որ ամեն կողմից առաջ էին հրում անթիվ, անհամար մանկական կմախքներ, որ դեռ շնչում էին…»**:

Այս ամենը մտովի պատկերացնելն անգամ այսօր սահմռկեցուցիչ է, իսկ ինչ էր զգում բանաստեղծի հոգին… Կա մի հայտնի լուսանկար, որ ցուցադրվում է Թումանյանի թանգարանում՝ «Թումանյանը և իր դուստր Նվարդը որբերի հետ Էջմիածնում, 1915թ.», որտեղ բանաստեղծն ընդամենը քառասունվեց տարեկան է, բայց նման է պատկառելի ծերունու… Մեկնաբանություններն ավելորդ են:
Թումանյանը, ժամանակ չկորցնելով, առանց քուն ու դադարի ձեռնամուխ է լինում գաղթականների և որբերի ապաստարանի, խնամքի, նրանց սնունդով ապահովելու գործին: Նրա անմիջական ղեկավարությամբ բացվում է հինգ հիվանդանոց՝ հինգ հարյուր մահճակալով, որբանոց՝ մոտ երեք հազար երեխայի համար:

Երեխաներից շատերը նրան հայրիկ էին անվանում: Թումանյանի գրառումներից. «**Երեխաներից ոմանք էնպես են սովորել, որ ճաշելուց հետո էլ փեշերս բռնում են / թեև հագնված են, պատսպարված և կերակրված/ հայրիկ ես որբ եմ , նա հեր ունեմ, նա մեր» : «…Որ ասում էին նոր շորեր պիտի կարենք ձեզ համար, էստեղից-էնտեղից գլուխ էին բարձրացնում.**

–Հայրիկ, ինձ համար կարմիր հալավ կարեցեք…»

Շատ հուզիչ և ուշագրավ են Թոթովենցի հուշերը. «Թումանյանը վազում էր կետից կետ, վրանից վրան… մի մեռնողից դեպի ուրիշ մեռնողը: Կարգադրում էր, հրամայում, հայհոյում, կշտամբում, ժպտում, շոյում, զայրանում: Մի օր էլ, տեղատարափ անձրևին, նա վազեց, բռնի կերպով բաց արավ նոր կառուցվող հայրապետական վեհարանը, որը մինչ այդ անձեռնմխելի էր: Գաղթականները լցվեցին ներս: Զայրացած կաթողիկոսը կշտամբում է պոետին, ասելով.

–Ինչպե՞ս եք համարձակվել, չէ՞ որ Ձեզ հետ խոսում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը…

Թումանյանը պատասխանում է.-

Բայց Ձեզ հետ էլ խոսում է Ամենայն Հայոց Բանաստեղծը»:

Սա թերևս ամենամեծ գնահատականն է, որին ակամա արժանացրել է ինքն իրեն բանաստեղծը:

Թումանյանը մեծ ջերմությամբ ու երախտագիտությամբ է մտաբերում, այդ մղձավանջային օրերին, անսահման անձնվիրությամբ որբախնամ գործին նվիրված հայ կանանց:

«…Հիշում եմ էն մանկական կմախքների խիտ-խիտ ու երկար շարքերը, երբ կերակրելու համար նստեցնում էին վերահսկող տիկիններն ու օրիորդները, որոնք ազատարար ոգիների նման, անդադար պտտվում էին նրանց վրա, ոտից գլուխ ճերմակ վերնաշապիկներ հագած, ցավից ու անտանելի ծանր օդից ու հոտից գունատված, դալկացած տիկիններն ու օրիորդները…»:

Այդ պահապան հրեշտակների թվում էր նաև Թումանյանի դուստրը՝ Նվարդը, որն արհամարհելով ամեն մի դժվարություն, կյանքին սպառնացող վտանգը /քիչ չէր գաղթականության մեջ մոլեգնող համաճարակային հիվանդություններից մահացող գթության քույրերի թիվը/ անձնվիրաբար ծառայում էր իր ժողովրդի փրկության գործին: Եղբորը՝ Արտիկին գրած նամակից.

«Հայրիկն ու ես պատրաստվում ենք, հիմա գնալու ենք Երևան: Որբանոցի երեխաներից հարյուր քսանհինգ հոգի պիտի փոխադրել Երևան, քառասուներեք ծծկեր երեխա կա, պահող չկա: Գաղթականներն արդեն ցրվում են. որբերը նորից շատացել են…Ճեմարանը հիվանդանոց են դարձրել: Հայրիկը շատ գոհ է… հոգնել է, բայց գործը կիսատ թողնել չի կարող»:

Հայրենասեր բանաստեղծի զավակները միմյանց չէին զիջում իրենց նվիրվածությամբ ու հայրենիքի ճակատագրի մտահոգությամբ: Ավագ որդին՝ Մուշեղն էլ ահազանգում էր Իգդիրից, որտեղ ընթանում էին պատերազմական գործողություններ: Նա նամակներից մեկում գրում է, որ որբ հայ մանուկներին կազակներն իրենց մեջ էին բաժանում, և դա կարծես արդեն սովորական երևույթ էր դարձել: Նա սրտի ցավով գրում է. «…Երեխաներին որդեգրում են և ռուսացնում…Հայ ազգը ուրիշ տեսակ զոհաբերության առաջ է կանգնած, մի նոր տեսակի թալանի առաջ է կանգնած, երեխաների թալա~ն…»: Ամենայն Հայոց Բանաստեղծի զավակներն այլ կերպ մտածել ու գործել չէին կարող:

Էջմիածնի դժոխքում Թումանյանը դստեր հետ մնաց մոտ երկու ամիս: Նա շատ դժգոհ էր հոգևորականությունից և զանազան կոմիտեներից, որ չէին կարողանում արագ կազմակերպել աշխատանքներն ու ժամանակին օգնություն ցույց տալ գաղթականությանը: Այդ պատճառով էլ գրեթե ամբողջությամբ իր վրա է վերցնում այդ դժվարին գործը:

Թե որքան ծանր է եղել այդ օրերին Թումանյանի վիճակը, պատկերացում ենք կազմում Լեոյի գրառումներից. **«Հովհ. Թումանյանը այդ դժոխքի մեջ է, գործում է, բարեբախտաբար չի գժվում»:**

Ազգի բանաստեղծը իրավունք չուներ գժվելու, որովհետև պիտի մի օր, անսահման երժանկությամբ արձանագրեր. **«...Հիշում եմ և էն լավ օրը, երբ առաջին անգամ վերահսկողները գանգատվեցին, թե արդեն չարաճճի են դարձել, դժվարացել է կառավարելը, ոմանք զվարթ երգում են խմբով, կատակներ անում, ուրախ-ուրախ ճչում, կրկչում: Ու ամենքիս աչքերն էլ լցվեցին ուրախության արտասուքով»:**